

## ԽԱԶԻԿ ԲԱԴԻԿՅԱՆ

Հոգևոր ձեմարանի դասախոս, քանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

## ՀՐԱԶՅԱ ԱԺԱՌՅԱՆԸ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Աճառյանի ծննդյան 120 և  
Հոգևոր ճեմարանի վերա-  
բացման 50-ամյակի առթիվ

Էջմիածնի Գևորգյան ձեմարանը, որ հիմնադրել է Գևորգ Դ կաթողիկոսը, և որի բացումը տեղի է ունեցել 1874 թ. սեպտեմբերի 28-ին, Հայաստանի միջնադարյան համալսարանների (Մանահին, Հաղպատ, Տաթև, Գլաժոր) օրգանական շարունակությունն էր:

Տարբեր տարիների ձեմարանում են դասավանդել հայագիտության ու մշակույթի այնպիսի կարկառուն դեմքեր, ինչպիսիք են՝ Կոմիտաս վարդապետը, Մանուկ Աբեղյանը, Հրայր Աճառյանը, Հովհ. Հովհաննիսյանը, Գր. Ղափանցյանը, Ստ. Մալխասյանցը, Հ. Մանանդյանը, Աշոտ Հովհաննիսյանը, Կարա-Մուրզան, Վարդգես Սուրենյանցը, Երվանդ Թադևոսյանը, Գարեգին Լևոնյանը, Ստեփանոս Լիսիցյանը, Ս. Մանդինյանը, Կ. Կոստանյանը, Գ. Էղիլյանը և շատ ուրիշներ: Այսօր էլ նույն կրթօջախում են դասավանդում Հանրապետության անվանի գիտնականներ, մանկավարժներ ու երաժիշտներ, ինչպես նաև բարձրաստիճան հոգևոր այրեր՝ ոչ միայն Հայաստանից, այլև արտերկրներից:

Այս սուրբ օջախում են կրթություն ստացել հայ անվանի մտավորականներ Կոմիտասը, Մ. Աբեղյանը, Ե. Թադևոսյանը, Սպ. Մելիքյանը, Ա. Շահմուրադյանը, Գ. Լևոնյանը, Ավ. Իսահակյանը, Սկսել Բակունցը, Ա. Միկոյանը Ա. Մոսավյանը և շատ ուրիշներ: Այստեղ են կրթություն ստացել և շարունակում են ստանալ հարյուրավոր շնորհալի հոգևորականներ, որոնք իրենց հոգևոր ծառայությունն են կատարում և պետք է կատարեն ոչ միայն Մայր Հայաստանի, այլև Հայաստանից դուրս գտնվող հոգևոր թեմերում ու եկեղեցիներում:

Գևորգյան ձեմարանի հետ է կապվում նաև մեծանուն լեզվաբան Հրայր Աճառյանի անունը:

Իր ապրած կյանքի 77 տարիներից 65-ը Աճառյանը նվիրաբերել է լեզվաբանական գիտություններին. չկա հայերենի ուսումնասիրության մի բնագավառ, որտեղ Աճառյանն իր ծանրակշիռ խոսքն առած չլինի: Ակնատու է, որ Հրաչյան դեռ մանուկ հասակից լեզուների նկատմամբ արտակարգ հակում է ցուցաբերել: Սամաթիայի (ծննդավայր) Արամյան դպրոցում սովորելիս 12 տարեկան պատանին ապատ գրում-կարդում էր գրաբար, հունարեն, ֆրանսերեն, անգլերեն, եբրայերեն, թուրքերեն: Լեզուների այս իմացությունը նա առավել խորացրեց իր կյանքի ընթացքում և նվիրվեց հատկապես հայագիտությանը: Աճառյանը հայոց լեզվի պատմության, հայ բարբառագիտության, հայոց լեզվի փորձատական հնչյունաբանության գիտաճյուղերի հիմնադիրն է: Անգնահատելի է նրա վաստակը հայ բառարանագրության, հայերենի արմատների ստուգաբանության, հայ անձնանունների ու տեղանունների ստուգաբանության, հայերենի համեմատական ու պատմական քերականության, հայերենի տիպաբանական-չուզադրական հետազոտության և քաղվածքի այլ բնագավառներում: Աճառյանը ընդհանուր և համեմատական լեզվաբանության խոշոր մասնագետ է, նշանավոր արևելագետ, լազերեն լեզվի առաջին ուսումնասիրողը: Եւ իր նպաստն է բերել նաև հայ ժողովրդի, նրա գաղթօջախների, մշակույթի ու գրականության և հայ բանասիրության տարբեր հարցերի ուսումնասիրությանը:

Հրաչյա Աճառյանի գիտական վաստակն ամփոփված է նրա՝ թվով 247 մեծ ու փոքր գիտական աշխատություններում, որոնց էջերի թիվն անցնում է 30 հազարի սահմանները՝ չհաշված մի քանի տասնյակից անցնող ձեռագրերը, և այդ բոլորը կատարված գիտական ամենաբարձր մակարդակով և պարտաճանաչության նախանձելի զգացումով: Եվ ավելի պարմանալին այն է, որ Աճառյանը այդ տիտանական աշխատանքը կատարել է մեկ աչքով: «Բայց մեկ աչքով լինելը ոչ մի նշանակություն չունի, - գրում է Աճառյանը, - ահագին «Արմատական բառարանս» (2693 մեծադիր էջ) հինգ հատոր «Անձնանունների բառարանս» (3136 էջ), տասը հատոր «Լիակատար քերականությունս» (համեմատած աշխարհի 562 լեզուների հետ) և այլն մի աչքի արդյունք են»: Մինչև այժմ աշխարհի՞ ոչ մի լեզվի համար այդպիսի քերականություն չի գրվել: Իսկ «Արմատականի» մասին ֆրանսիացի հայտնի լեզվաբան Անտուան Մեյեն գրել է. «Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանը» մի կոթող է: Ոչ մի լեզվի համար չկա այդքան ճոխ, այդքան կատարյալ ստուգաբանական բառարան»:

Աճառյան գիտնականի ու մանկավարժի կյանքը հանգիստ ու ապահով չի անցել. այն լի է եղել դեզերումներով ու քաղվածապիսի գրկանքներով. Պոլիս (որտեղ ծնվել է 1876-ի մարտի 8-ի՝ Փարիզ (որտեղ Սորբոնում 4 տարի աշակերտել է պրոֆ. Մեյեին), Գերմանիա՝ Ստրասբուրգ (որտեղ մեկ կիսամյակ լսել է հոշակավոր լեզվաբան Հյուբշմանին), Էջմիածին (որտեղ 4 տարի դասավանդել է Հոգևոր ձեմարանում և գրել քաղվածքի ուսումնասիրություններ), Շուշի (որտեղ

2 տարի դասավանդել է թեմական դպրոցում, ամուսնացել Արուսյակի հետ և երկու շաբաթով հյուրընկալել իր ուսուցիչ Մելեյին), Թավրիզ (2 տարի), Նոր Նախիջևան (12 տարի), Նոր Բայապետ (1 տարի), Թեհրան նորից Թավրիզ (4 տարի) և վերջապես՝ Երևան (1 տարի), պետական համալսարան՝ 30 տարի: Այստեղ աշխատեց մինչև իր կյանքի վեցին օրը՝ 1953 թ. ապրիլի 16-ը): Ահա այսպիսին է եղել Աճառյանի կյանքի աշխարհագրությունը, որի պատճառը նյութական անապահովությունն էր, նպատակը՝ հայերենի այդքան տարածված քարքառների հավաքելն ու ուսումնասիրելը:

Աճառյանը նյութական շատ ծանր կացության մեջ է եղել հատկապես Փարիզում ուսանելու տարիներին. դասերից հետո, երեկոյան ժամերին, փողոցներում լրագրեր է վաճառել, գիշերները կայարանում վազոններ մաքրել, պատուհանները լվացել, բեռնակրությամբ պաղպել, կինոյի հայտարարություններ ցրել, գիշերային գարեջրատների դռներին խարկած գետնապիստակ (Ֆստի) վաճառել, բազմաթիվ օրեր սոված է անցկացրել՝ ուտելով 5 կոպեկի հաց և 2-3 զապար: Ուսման վարձը վճարելու համար ստիպված է եղել վաճառել իր անկողինը և քնել ձեղնահարկում կամ մայթերին՝ լրագրերի վրա: Բայց կամքի ուժն ու ուսումը կիսատ չթողնելու համառությունը հաղթահարում են բոլոր դժվարությունները, և լեզվաբանական բարձրագույն կրթություն ստացած ու Եվրոպայում արդեն ճանաչման արժանացած 22 տարեկան գիտնական-լեզվաբանը վերադառնում է կովկաս ու իրեն նվիրում գիտական ու մանկավարժական շնորհակալ ու պատասխանատու աշխատանքի՝ այն սկսելով Էջմիածնի Հոգևոր ճեմարանում:

1898 թ. աշնանը Աճառյանը Էջմիածին է հասնում գիշերով. անցնում է Տրդատա դռնով, նախկին Վեհարանի առջևով մտնում է Ղապարապատ կոչվող հյուրանոցի շենքը, որը այժմյան սեղանատան տեղում էր: Հյուրանոցի կառավարիչ Սիոն վարդապետը աղքատիկ հազնված ու վտիտ օտարականին տեղ չի տալիս, բայց երբ արտաքինից խճուկ թվացող երիտասարդը վարձ գերմաներենով խոսում է կնոջ հետ Գերմանիայից Էջմիածին ժամանած պրոֆեսոր Ռոոբախի հետ, Սիոն վարդապետը, պարմացած նրանց մտերմիկ խոսակցությունից, նրանց միասին հրավիրում է սեղան նստել, որից հետո Աճառյանին ևս տեղ է հատկացնում հյուրանոցում: Աճառյանը պատմում է, որ ինքը Ռոոբախի հետ ծանոթացել է Ստրասբուրգում, Հյուրըմանի մտո ուսանելու ժամանակ:

Այդ ժամանակ Մայր Աթոռի գահակալն էր Խրիմյան Հայրիկը (Մկրտիչ Վանեցի)՝ Հայ Եկեղեցու 125-րդ կաթողիկոսը. նա կարճատև հանգստով գտնվում էր Բյուրականի ամառանոցում, վերադառնում է երկու օրից, և Աճառյանը ներկայ մտնում է Վեհափառին, հարտնում իր ով լինելը և Էջմիածին գալու նպատակը՝ ուսուցչությամբ պաղպելու, հայերենի քարքառները հավաքելու և մատենադարանի ձեռագրերը ուսումնասիրելու նպատակով:

Վեհափառ Հայրապետը, մինչև Աճառյանին տեսնելը, լսել էր նրա մասին և ծանոթ էր նրա մի քանի հոդվածներին «Բազմավեպ» և

«Հանդես ամսօրյա» հանդեսներից: Աճառյանի կիրթ արտաքինը, խելացի պատասխաններն ու իրեն վայելուչ պահելը դուր են գալիս կաթողիկոսին, և նա հետաքրքրվում է երիտասարդի անցյալով:

- Պատմե, տեսնեմ անցյալդ, - դիմում է նա Աճառյանին:

«Ես սկսեցի պատմել հետևյալ ռճով, - գրում է Աճառյանը, - ըստ կարելիության կարճ»: Եվ նրա՝ կաթողիկոսին պատմածից ենք տեղեկություններ քաղում նրա կյանքի առաջին շրջանի մասին: «Ծնվել եմ Կոստանդնուպոլսի Սամաթիա թաղում 1876 թվականին: Հայրս կոշկակար է. ավարտել եմ Սամաթիայի դպրոցը, հետո՝ Ղալաթիո Կեդրոնական վարժարանը 1893 թվականին. մեկ տարի ուսուցիչ եմ եղել Ղալաթիայի նախակրթարանում և Գաղգյուղի Արամյան վարժարանում. մի տարի էլ ուսուցիչ եմ եղել Կարինի Սանասարյան վարժարանում: Այնտեղից գնացի Փարիզ՝ լեզվաբանություն սովորելու. սովորեցի և գնացի Ստրասբուրգ, ուր Հյուբշմանի մոտ էլ սովորելուց հետո եկա Էջմիածին»:

- Էհ, - պատասխանեց կաթողիկոսը, - դուն ալ ինձի պես գլորվելով, գլորվելով եկեր ինկեր ես Էջմիածին... Շատ լավ է... Տաճկերեն գիտե՞ս:

Աճառյանը պատասխանում է, որ Կոստանդնուպոլսի հայոց դպոցներում տաճկերեն լեզվի ուսուցիչ է եղել:

- Այդ շատ լավ եղավ, մեզի համար ճեմարանին մեք տաճկերեն լեզվի ուսուցիչ պետք է<sup>1</sup>. Նախկին ուսուցիչ (Ճանիկյան) ծերության պատճառով հրաժարեցավ. քեզ անոր տեղ ուսուցիչ կնշանակեմ, վանքին մեք սենյակ կստանաս, ամսական 25 ուրլի ռոճիկ կստանաս, ճաշդ, վառելիքդ վանքեն կրլլա. գո՞հ ես:

Վեհափառ Հայրապետի նման բարեհաճ վերաբերմունքից և առաջարկած բարենպաստ պայմաններից Աճառյանը ցնծության մեք էր, մանավանդ, որ մատենադարանը այդ ժամանակ (մինչև 19379 թիվը) գտնվում էր Էջմիածնում՝ վանքի բակում (այժմյան ճեմարանի շենքում):

Էջմիածնում Աճառյանն աշխատում է 4 տարի՝ 1898-1902 թթ.: Տեղի կիրթ միջավայրը, նպաստավոր պայմաններն ու մատենադարանում եղած հարուստ ձեռագրերն ու բազմալեզու գրականությունը մեղվաջան գիտնականի համար բարենպաստ պայմաններ են ստեղծում: Եվ այստեղ, իր մանկավարժական աշխատանքին կուգահեռ, գիտության անխոնջ մշակը ստեղծեց հայագիտական սքանչելի կոթողներ: Այստեղ նրա առաջին գործը եղավ վերամշակել ու համալրել դեռ Կարինի Սանասարյան վարժարանում սկսած Արմատական բառարանը. մատենադարանի հարուստ գրականությունն ու բառարանները նրան

<sup>1</sup> Գևորգ Դ մեծագործ կաթողիկոսը 1874 թ. Ռիմոնով ճեմարանը և տեղ տալով քաղմաթիվ տաճկահայ աշակերտների, նրանց համար նախատեսել էր ման տաճկերենի ուսուցումը, որպեսզի երկիր վերադառնալուց Ռետո տաճկերեն կարդալ-գրել չիմանալու պատճառով զո՞հ չգնային տաճիկ պաշտոնյաների քմահաճույքին (Աճառյան, Կյանքիս Քուշերից, էջ 202):

հնարավորություններ են ընձեռնում նորանոր ստուգաբանություններ կատարել Արմատականի համար կամ ճշգրտել եղածները: Ծաստորեն այստեղ է մշակվում ու գիտական տեսքի բերվում աշխարհում նմանը չունեցող Արմատականը, որը համարվեց ու անընդհատ վերամշակվեց իր հետագա կյանքի բոլոր 40 տարիներին: Այստեղ Աճառյանը հանգամանորեն ուսումնասիրում է Մատենադարանի 4000 ձեռագրերը, կապում է տաղերի հավաքածու և «Նոր վկաներ» աշխատությունը, որտեղ տեղ են գտել 1155-1843 թթ. մեր մատենագրությանը ավանդված հայ նահատակների պատմությունը (այս գործում Աճառյանին ընկերակցել է ձեռարանի ուսուցիչ Հակոբ Մանանդյանը): Այդ երկու ուսումնասիրությունները լույս են տեսնում Վաղարշապատում «Հայոց նոր վկաներ» վերնարգով՝ 2 հատորով՝ 1902 և 1903 թթ. Մայր Աթոռի տպարանում:

Նշված 4000 ձեռագրերի մեջ Աճառյանը 1111 համարի տակ հայտնաբերում է Եզնիկի ձեռագիրը՝ գրված Մենրոսյան հայերենով, որը որպես առանձին գիրք հրատարակվում է Վիեննայում, Մխիթարյան տպարանում, 1904 թ. «Քննություն և համեմատություն Եզնիկայ նորագիտ ձեռագրին» վերնագրով: Գրքի առաջաբանում Աճառյանը խոսում է այդ գյուտի մասին:

Աճառյանը Մանանդյանին հայտնում է, որ ծրագրել է հին հայոց մշակույթի պատմությունը գրել և այդ նպատակով պրպտում է հին հայոց ամբողջ գրականությունը, բայց երբ իմանում է, որ Մանանդյանն էլ նույն նպատակն ունի և արդեն ուսումնասիրել է հունական աղբյուրները, ինքը այրում է իր աշխատանքը: Հետագայում Աճառյանը ավստասանքով գրում է. «Ցավում եմ իմ այդ անմտության վրա, որովհետև ոչ միայն Մանանդյանը, այլև ուրիշ ոչ ոք չկապեց այդպիսի աշխատություն: Իմ իդեալն է մնացել այդպիսի գեղեցիկ աշխատությունը, որ գրել առաջարկել եմ շատերին, բայց ոչ ոք չի գրել»: Եվ Աճառյանը ներկայացնում է իր համառոտ ծրագիրը այդ շատ հետաքրքիր ու օգտակար աշխատանքի վերաբերյալ: Նմուշի համար բերենք այդ ծրագրի կետերից մեկը. օրինակ, ի՞նչ պետք է գրվեր հայոց կրոնի մասին. «ԿՐՈՆ - Հին հայոց հեթանոսական կրոնը, 7 բնիկ սաստվածներ (Արամավղ, Մնահիտ, Նանե, Աստղիկ, Մհիր, Վահագն և Տյուր), 8-րդ՝ օտար սաստվածություն (Բարշամինա), մեհյան, քրմական սաստվածներ, պոհաբերություն»:

Այսպիսի մանրամասն ծրագիր էր կապել նաև հին հայոց բնակարանի, հազուստի, ուտելիքի, ընկերական կյանքի, պետության, պինվորական իշխանության և հայոց կյանքի հետ կապված բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ:

Իր «Քննություն վանի բարբառի» հայտնի աշխատությունը Աճառյանը նույնպես Էջմիածնում է գրել՝ 1898-1902 թվերին: Վանի բարբառը նա հիմնականում ուսումնասիրել է ձեռարանի իր ուսանողներից քաղած նյութի հիման վրա. «Ինձ աշակցում էին բարձր դասարանների տասնյակ ուսանողներս, որոնք բոլորը նոր էին գաղթել Վանից և շատ լավ գիտեին իրենց մայրենի բարբառը:

Ինչպես երևում է, էջմիածնական տարիները շատ բեղմնավոր են եղել Աճառյանի գիտական գործունեության համար. նա այստեղ է գրել նաև «Ղարաբաղի բարբառը», «Թուրքերենի փոխառյալ բառերը հայրենեհի մեջ», «Ուսումնասիրություններ բարբառախոսության», «Մանկական բարբառ», «Մեր լեզվի տարրերը», «Չեռագրական սրբագրություններ Փավստոսի մեջ», ինչպես նաև բազմաթիվ հոդվածներ ու գրախոսություններ, որոնց զգալի մասը տպագրվել է Էջմիածնի Մայր Աթոռի պաշտոնական օրգան «Արարատ» ամսագրում (այն հրատարակվել է 1868-1919 թթ.): «Արարատը» հայգիտական առաջին հանդեսն էր Կովկասում, որտեղ, բացի կրոնական հոդվածներից ու կոնդակներից, հրատարակվում էին նաև բանասիրական, մանկավարժական և այլ բնույթի հոդվածներ: Ամսագրի խմբագիրը ձեռնարանի տեսուչ Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանն էր՝ Գերմանիայում կրթություն ստացած բարեկիրթ, ուսյալ ու բարեհամբյուր մի անձնավորություն, որը բարձր էր գնահատում Հրաչյա Աճառյանին: Նրան նշանակում է «Արարատի» սրբագրիչ, միաժամանակ վստահելով ձեռնարանի գրադարանի գրադարանապետի պաշտոնը, որը գրքերի ու ձեռագրերի մեջ խորասուզվելու անհագուրդ կիրք ունեցող գիտնականին ավելի մեծ հնարավորություններ է ընձեռում շատ մտքիկից ու հանգամանորեն շփվելու և ուսումնասիրելու գրադարանի չափազանց հարուստ գրականությունն ու ձեռագրերը:

Աճառյանը Էջմիածնի տպարանում վրադվել է նաև գրաշարությանը. նա ինքն է շարել իր «Թուրքերենի փոխառյալ բառերը» գիրքը, քանի որ արաբերեն շարող գրաշար Էջմիածնում չի եղել:

Էջմիածնում աշխատած 4 արդյունավետ տարիների ընթացքում Աճառյանը մտքիկից շփվել է հոգևոր դասի, մշակույթի, գիտության ու մանկավարժության շատ երախտավորների հետ, որոնցից մի քանիսի մասին իր հիշողություններում բնութագրական ու գնահատողական բավականին հետաքրքրական դիտողություններ ունի, որոնք այսօր էլ իրենց կրթադաստիարակչական նշանակությունն ունեն:

Ինչպես ասվեց վերևում, Աճառյանը Էջմիածնում եղած երրորդ օրը հանդիպում է Խրիմյան Հայրիկին: Կաթողիկոսը բարեհաճորեն է ընդունում հոդվածներից արդեն ծանոթ Աճառյանին և նրան նշանակում ձեռնարանի տաճկերեն լեզվի ուսուցիչ: Հենց առաջին հանդիպումից Վեհափառ Հայրապետը լավ տպավորություն է ստանում Աճառյանից և մտադրվում նրան վարդապետ դարձնել, սակայն Աճառյանի կոչումը այլ էր՝ ամբողջ կյանքը նվիրաբերել լեզվաբանությանը, շրջել հայաշատ բնակավայրերը և հավաքել ու ուսումնասիրել հայերեն բարբառները: Խրիմյան Հայրիկը հասկանում է Աճառյանին, չի պարտադրում իր պահանջը, և Աճառյանը ամբողջ կյանքում երախտապարտ է մնում կաթողիկոսին. «Իբրև ուսումնասեր մարդ, Հայրիկը, անշուշտ, գաղափար կալվել էր իմ մասին: Ուստի և առաջին օրվանից ինձ լավ ընդունելություն ցույց տվեց և պատճառ

եղավ, որ ես մնայի Էջմիածնում և խորանայի հայագիտության մեջ: Չգիտեմ, եթե նա սկզբից եթե ինձ տեղ տված չլիներ, իմ կյանքի ընթացքը ինչ կլիներ: Արդյոք կկատչեի՞ հայագիտության մեջ այդպես խոր և անխախտ կերպով», երախտագիտությամբ գրում է Աճառյանը: Խրիմյանն էլ իր համակրանքն էր տածում Աճառյանի նկատմամբ. նա հաճախ էր «իր միակ բարեկամին» երեկոները կանչում իր մոտ և մինչև կենդիշեր պրուցում Աճառյանի հետ: «Խոսում էր ամիրանների կյանքից, գրողների կյանքից, իր էվրոպական ճանապարհորդություններից և այլն: Եվ այս բոլորը մի քանի անգամ: Բայց որովհետև ես պատմաբան չեմ, ուստի մոռացության մատնեցի»: Այնուհետև Աճառյանը պատմում է խրիմյանի բնավորության որոշ գծերի մասին: Օրինակ, նրա հումորը ընդգծելու համար հիշում է հետևյալ դեպքը. «Երբ կաթողիկոսը առաջին անգամ եկել է Էջմիածին, ճեմարանի ամբողջ ուսուցչական կազմը իրենց կանանց հետ եկել են աջը համբուրելու: Կաթողիկոսը, տեսնելով <. Հովհաննիսյանին և նրա կնոջը՝ Չարուհուն, որ շատ կարճահասակ մի կին էր, ասում է. «Պարոն Հովհաննիսյան, այդքան սիրային բանաստեղծությունները որ գրել ես, այս կնոջ համա՞ր է... լավ ես արել, չարիքներից փոքրագույնը ընտրել ես»:

Կաթողիկոսի սրախոսության մեկ ուրիշ դեպքի մասին էլ է հիշում Աճառյանը: Մասիս բարձրանալու նպատակով Էջմիածին էին ժամանել ու կաթողիկոսին ներկայացել քաղմալեպու մի խումբ հայեր: Նրանց թարգմանը եղել էր քիչ-միչ ֆրանսերեն ու անգլերեն իմացող կարապետ վարդապետը (ճեմարանի տեսուչը), որը մի քիչ կակապ էր: Հյուրերի գնալուց հետո կաթողիկոսը իր կծու սրախոսությամբ ասել էր.

- Այսօր կարապետ վարդապետը ութ լեզվով կակապեց:

Դրանից հետո Վեհափառը թարգմանչի պարտականությունները հանձնարարում է Աճառյանին:

Աճառյանը թարգմանչի դեր է կատարում պարսից Շահի՛ Երևան և Էջմիածին գալու ժամանակ: Այստեղ Աճառյանը պատմում է, որ տեսել է 5 թագավորների (Սուլթան Համիդին՝ «տզեղ էր՝ զապանի դեմքով», Սերբիայի պատանի թագավորին՝ «համակրելի դեմքով», Նիկոլայ կայսրին՝ Փարիզում, Վիլհելմ կայսրին՝ Ստրասբուրգում, և պարսից Շահին՝ Երևանում՝ խրիմյանի հետ):

Աճառյանը Էջմիածնում 4 տարի ընկերություն է արել Կոմիտաս վարդապետի հետ և բավականին հիշողություններ ունի նրա մասին:

Աճառյանը պատմում է, որ Կոմիտասը մի ազնիվ ու բարի մարդ էր՝ հանգիստ ու խաղաղ բնավորությամբ: Երբեք չէր պայրանում: Չորս տարվա մեջ մեկ անգամ է պայրացել, այն էլ ճեմարանի սաների ոչ ճիշտ երգեցողության պատճառով: «Վերին աստիճանի կոմիկ մարդ էր Կոմիտաս վարդապետը, առատ մորուք չուներ, քոսակ էր: Սկանջների մապերը չէր կտրում և սարկը չէր մաքրում, ասելով թե դրանք բնության կողմից տրված միջոցներ են լսողությունը արտաքին վտանգներից պաշտպանելու համար: Քնած միջոցին բարձ չէր դնում գլխի տակ, և վերմակը մի սավան էր միայն... Սենյակի դուռը և պատուհանները

շղարշով էր պատոււմ, որպէսզի ոչ մի ճանճ չմտնի և իր ճայնագրած էջերի վրա որևէ կետ չափելացնի», գրում է Աճառյանը:

Կոմիտասի հետ կապված մի զվարճական դէպք է պատմոււմ Աճառյանը. «Պատմոււմ են, թէ մի օր Կոմիտասը դաշտոււմ մի խնջուլքի ժամանակ լսոււմ է էջի գոայլը. խկույն մի թղթի կտոր է վերցնոււմ և սկսոււմ է ճայնագրել. Կոմիտասը էջին հանդիմանոււմ է. թէ այ ապուշ, սիսալ ես գոոււմ, գոալ էլ չգիտես, այդպես չէն գոա»:

Աճառյանի վկայությամբ Կոմիտասը գրել է նաև մի օպերետ' Հ. Պարոնյանի «Քաղաքավարության վնասները» լիբրետոյով, այն սովորեցրել ճեմարանի երգչախումբին և մի հանդիսավոր օր ժողովրդի ներկայությամբ ներկայացրել, բայց այն դուր չի եկել ո'չ ժողովրդին և ո'չ էլ հեղինակին:

Աճառյանը երկու կարևոր փաստ է հիշատակոււմ Կոմիտասի մասին, որոնք վկայոււմ են մեծ երաժշտի տաղանդի և հայրենասիրության մասին: Սիւ դրանք. Գերմանիայոււմ մեծ հաջողությամբ երաժշտական ուսոււմն ավարտելուց հետո, նրան առաջարկոււմ են օպերայի երգչի պաշտոն' ամսական 1000 մարկ ոոճիկով, Կոմիտասը մերժոււմ է' հայտնելով, թէ ինքը Հայ Եկեղեցու վարդապետն է. վերադառնոււմ է Էջմիածին ու դառնոււմ Հոգևոր ճեմարանի երգեցողության ուսուցիչ:

Բուլղարիայի թագավորը, լսելով Կոմիտասի համբավը, նրան հրավիրոււմ է Բուլղարիա և խնդրոււմ, որ Կոմիտասը հավաքի ու ճայնագրի բուլղար ժողովրդական ազգային երգերը: Կոմիտասը կատարել է նրա խնդրանքը: Նույն նպատակով Կոմիտասին հրավիրոււմ է նաև Սերբիայի թագավորը:

Մառի հետ Աճառյանը ժանթթանոււմ է Բյուրականի հայրապետական ամառանոցոււմ հանգստանալիս. դա 1899 թ. ամոանն էր: Պետերբուրգի համալսարնի սևահեր, թխադեւ պրոֆեսորը, որ ապատ խոսոււմ էր հայերեն, լսել էր Աճառյանի և նրա Արմատական բառարանի մասին, ժանթթանոււմ է հետը և հարցնոււմ' ճիշտ է, որ այդ բառարանոււմ Աճառյանը մեկնել է հայերեն բոլոր արմատները:

- Ոչ, - պատասխանեցի ես, - հազիվ կարողացել եմ կեսը մեկնել:

Մառը ժպտալով ասել է, թէ եթե բոլոր արմատները մեկնեք, անպետք աշխատություն կլինեք, որովհետև անկարելի է հայոց բոլոր արմատները մեկնել: Նրանց է մոտենոււմ բանատեղծ Հ. Հովհաննիսյանը, որը Մառին վաղուց էր ճանաչոււմ' Պետերբուրգից: Սկսվոււմ է սիրալիր խոսակցություն: Հովհաննիսյանը հյուրերին ճաշի է հրավիրոււմ. տանն էին կինը' Չարուհին և երկու քույրերը, որոնցից մեկի անունը Սիրանույշ էր. Աճառյանը, իր սովորության համաճայն, տեղնուտեղը մեկնոււմ է այդ անունը, որ պարսկերեն նշանակոււմ է հրեշտակ, իսկ պարսկերենին անցել է պենդերենից' սրաօշա (նույն իմաստով): Մառը հաստատոււմ է Աճառյանի ասածը և գովեստի շատ խոսքեր ասոււմ նրա հասցեին: Մառը Աճառյանին հրավիրոււմ է Արտաշատոււմ իր պեղումներին: Նրանք սիրով աշխատոււմ են մի քանի օր, բայց' անարդյունք: Այդ մի քանի օրվա ընթացքոււմ նրանք

բավականին բանավիճում են լեզվաբանական հարցերի շուրջ: Մտոր դեռ նոր-նոր էր իր ուսմունքը պարզացնում: Նա վրացերենը ազգակից էր համարում սեմական լեզուներին և հնդեվրոպական, սեմական ու կովկասյան երեք լեզուները բխեցնում մի լեզվից, որը կոչում էր նոյան: Եվրոպայում լեզվաբանական կրթություն ստացած Աճառյանին այդ դրույթը չէր համոզում, բայց նրանց բանավեճը երբեք թշնամանքի չէր վերածվում: Ընհակառակն՝ Մտոր ավելի բարձր է գնահատում Աճառյանին ու նրա գիտելիքները. «Շատերի մասին լսում ես մեծ գովասանք, գնում, ծանոթանում ես և հազիվ լսածիդ կեսն ես գտնում: Չեզ հետ հակառակը եղավ. ինչ որ լսել էի ձեր մասին, տեսա և կրկնապատիկը տեսա»: Մտոր, զգալով Աճառյանի տաղանդը լեզվաբանությամբ և քննադատում և քաղցրաբար լեզուների տիրապետելը, նրան առաջարկում է իր հետ գնալ Պետերբուրգ. «ձևի համար աշակերտեցեք ինձ մի տարի, ոռուներն կսովորեք, կավարտեք, ես ձեզ կամուսնացնեմ պրոֆեսորներից մեկի քրոջ կամ աղջկա հետ, և դուք կլինեք նշանավոր գիտնական»:

Ահա Աճառյանի պատասխանը. «Ավելի լավ եմ համարում մնալ աղքատ ուսուցիչ և ապրել ու ծառայել իմ հարապատ ժողովրդի մեջ, քան թե գնալ Ռուսաստան»:

Աճառյանը որոշ կենսագրական տեղեկություններ է տալիս Մտոի մասին. Հայրը իդյանդացի էր, մայրը՝ մինգրել: Կովկասում (Քութայսում) սովորելուց հետո գնում է Պետերբուրգի համալսարան, աշակերտում Քերովբե Պատկանյանին. նա Ստ. Մախասյանցի դասընկերն էր:

Մանուկ Արեղյանին Աճառյանը ճանաչում էր դեռ Փարիզից: Նա Էջմիածնում մեծ համբավ էր վայելում, որպես մեծ հայագետի, և բոլորը խոնարհվում էին նրա առաջ: Աճառյանը խոսում է նրա լեզվագիտական մի քանի նորարարությունների մասին (սեռական հոլովի մերժումը, շնչավորի և անշնչի տարբերակումը, ուղղագրական ռեֆորմները և այլն) և ավելացնում, որ իրենք ավելի մտերմացան Երևանի համալսարանում համատեղ աշխատանքի ժամանակ: «Չնայած այդ մտերմությանը, - բողոքում է Աճառյանը, - նա իմ այնքան քաղցրաբար աշխատանքների մասին ոչ մի գովասանական կամ քաջալերական խոսք չի ասել: Կողմնակի աղբյուրներից լսել եմ միայն, որ նա իմ մասին ասել է. Աճառյանի պես մարդ հարյուր տարվա մեջ մի անգամ չի ծնվի, չափապանց աշխատասեր, անշահախնդիր, փող չսիրող մարդ է»: Այսքանը միայն Արեղյանի մասին:

Աճառյանը սիրով ու ակնածանքով է խոսում ճեմարանում որպես պատմության ուսուցիչ հրավիրված երիտասարդ գիտնական Հակոբ Մանանդյանի մասին. «Խոսելու մեջ շատ հաջողակ էր: Բարձաձայն, լավ մտածված և գեղեցիկ առոգանությամբ հանրապատրաստից ճառեր էր խոսում հայերեն և ռուսերեն. տիրապետում էր նաև օտար լեզուներ: Ունենալով վայելուչ արտաքին և բարձր հասակ՝ շատերին սիրելի դարձավ»:

Ն. Մանանդյանի հետ ձեմարանում ուսուցչական աշխատանքի է հրավիրվել Սիրական Տիգրանյանը՝ մասնագիտությամբ իրավաբան: Մանանդյանի նման նա էլ Էջմիածին էր եկել վարդապետ դասնալու, բայց, տեսնելով հոգևորականների նյութական անապահով վիճակը, Մանանդյանի նման հրաժարվել է այդ մտքից և մնացել որպես ուսուցիչ: Այս երկու երիտասարդ գիտնականները, իբրև հայագիտության սիրահարներ, շատ են մտերմանում Աճառյանի հետ, կապվում մի եռյակ միություն ու հայրենանվեր աշխատանք կատարում ինչպես գիտության բնագավառում, այնպես էլ մանկավարժության ասպարեզում՝ ուսանողներին տալով այն բարձր գիտելիքները, որ ստացել էին իրենք:

1902 թ. ամռանը Էջմիածնի տպարանում Աճառյանին հանդիպում է Բենիկ վարդապետը և հայտնում, որ Շուշիի թեմական դպրոցում հայեթե՛սի ուսուցչի պահանջ կա: Այդ առաջարկը հրապուրում է Աճառյանին, և նա Շուշիի հայ մանուկներին կրթելու և Ղարաբաղի բարբառը ավելի լավ ուսումնասիրելու համար մեկնում է Շուշի:

Անհրաժեշտ ենք գտնում անդրադառնալ նաև Աճառյանի բնավորության որոշ գծերին, որոնք, անշուշտ, կրթադաստիարակչական մեծ նշանակություն ունեն ոչ միայն ուսանողների ու մտավորականների, այլև ցանկացած քաղաքակիրթ մարդու համար:

Առաջին և գիտնականի համար շատ կարևոր հատկանիշը, որ նշում են Աճառյանի ուսանողները, ասպիրանտներն ու մտերիմները, դա նրա պարմանայի աշխատասիրությունն էր, որ դուրս է բոլոր համեմատություններից, - գրում է Ռուբեն Չարյանը: Մնուրանայի է, որ հիմնականում համառ աշխատասիրության շնորհիվ է Աճառյանն ստեղծել գիտական այն հսկա ժառանգությունը (30 հապար էջ՝ չհաշված ձեռագրերը), որը վեր է երևակայությունից և մեկ մարդու կարողություններից: Ժամանակի աննպատակ կորուստը մեծ գիտնականը ամենամեծ չարիք էր համարում, և ինքն էլ ստեղծագործում էր աշխատանքային խիստ ռեժիմով: Իր ասպիրանտների պատմելով Աճառյանը խստագույնս հետևում էր իր օրվա ռեժիմին: Չգիտե՛ր ինչ է հոգնությունը, և աշխատում էր մինչև աչքերի փակվելը, հաճախ իր նյութի հետ պաղպղում էր նույնիսկ քնի մեջ: Հոգնելիս փոխում էր աշխատանքի բնույթը, սկսում էր բարբառներով կամ բառարաններով պաղպղել: Ետտ էր սիրում բառարաններ կարդալ: Նույնն էլ խորհուրդ էր տալիս իր սաներին: Եվ իրոք, բառարաններն են հարստացնում մարդու բառապաշարը և իրպե՛կ դարձնում բառերի բազմմաստությանը: Սրա լավագույն օրինակը Պարույր Սևակն է: Բառարանները նրա սեղանի գրքերն էին, որոնք անընդհատ կարդում էր Սևակը, և արդյունքը ակնհայտ է, ըստ պրֆ. Ա. Պապոյանի հաշվարկների, Պարույր Սևակի ողջ ստեղծագործության բառապաշարը (26600 բառ) գերազանցում է ոչ միայն հայ դասականների, այլև Հոմերոսի, Շեքսպիրի և նույնիսկ Պուշկինի բառապաշարը:

Աճառյանը նույնիսկ իր ամենամոտ մարդկանց ու ասպիրանտներին ընդունելու սահմանված ժամեր ու ժամաքանակ էր հատկացնում և առանց նախապես պայմանավորվելու ոչ ոքի չէր ընդունում: Պատմում են, որ մի օր, առանց պայմանավորվելու, Աճառյանի մոտ մի կին է գալիս և խնդրում իրեն ընդունել միայն 5 թուպեով և մինչև վերարկուն հանում ու մապերն է հարդարում, 5 թուպեն անցնում է, Աճառյանը նայում է ժամացույցին ու ասում. «Տիկին, Ձեր խնդրած 5 թուպեն լրացավ, ես պետք է աշխատեմ»:

Աճառյանը ճշմարտության ու ճշտապահության ուղեցույց է եղել. ըստ նրա՝ ճշտապահությունը մարդու նկարագրի ամենաէական հատկանիշներից մեկն է, նրա հաջողության գրավականը: Իր ուսանողների պատմելով իրենց ուսուցչապետը ոչ մի անգամ դասերից չի բացակայել, երբեք մեկ թուպե անգամ չի ուշացել, ժամադրություններին ներկայացել է ճիշտ ժամանակին, տված խոստումը երբեք չի մոռացել ու չի դրժել: Աճառյանի ճշտապահության մասին նույնիսկ անեկղոտներ են ստեղծել ու պատմել. ահա դրանցից մեկը: Բժշկական ինստիտուտի ռեկտորը հանդիմանում է դոնապանին, որ դասերն սկսելու պանգը ուշացնում է, դոնապանը պատասխանում է, որ պանգին դեռ 5 թուպե կա, որովհետև ընկեր Աճառյանը նոր է անցել իրենց դռնից ու բարձրացել համալսարան: Աճառյանի ճշտապահության կապակցությամբ Ռուբեն Չարյանը հետևյալ դեպքն է պատմում: Իր խմբագիր եղած ժամանակ Աճառյանը մի հոդված է բերում խմբագրություն և հարցնում, թե երբ կարող է պատասխանն իմանալ, խմբագիրը խոստանում է հենց վաղը պատասխանել: Հաջորդ օրը Աճառյանը գալիս է ու, իմանալով, որ խմբագիրը դեռ չի կարդացել, նրան խորհուրդ է տալիս՝ ստույգ լինել, տված խոսքի տերը լինել և թարգմանաբար պարսկական մի ասացվածք է բերում. «Մինչև խոսքի տալը դու ես խոսքի տերը, խոսքը լալուց հետո՝ խոսքն է քո տերը»: Մեկ ուրիշ անգամ, երբ Աճառյանը նորից Ռ. Չարյանի մոտ էր, մի գրող է ներս մտնում, պրոֆեսորից ներողություն խնդրում, որ խմբագրի հետ երկու խոսք ունի փոխանակելու, բայց այդ երկու խոսքը դարձել է հարյուր, և նրա դուրս գալուց հետո Աճառյանը նորից պարսկական մի իմաստուն խոսք է ասում. «Մարդ կա՝ գիտի և գիտի, որ գիտի, մարդ կա՝ գիտի և չգիտի, որ գիտի, մարդ էլ կա չգիտի և չգիտի, որ չգիտի» և Աճառյանը ավելացնում է, որ այցելուն այդ վերջիններից է. «Ամենասարսափելին վերջինն է, - ասաց նա, - բոլոր դժբախտությունների պատճառը այն մարդիկ են, որոնք տգետ են և կարծում են, թե խելոք են, իսկ երբ այդպիսի մարդկանց վստահվում է բարձր պաշտոններ, պետք է պատկերացնել, թե ինչ ավերներ կարող են գործել՝ հաճախ անգիտակցաբար»:

Պատմում են նաև, որ Աճառյանը առասպելական հիշողություն և հրաշալի լսողություն ուներ. նա իր ուսանողներին ճանաչում էր ձայներից և հիշում նստատեղերով: Նրա ուսանողներից մեկը՝ պրոֆ. Ալ. Մարգարյանը, պատմում է, որ պրոֆեսորը սովորություն ուներ դասն սկսելուց առաջ ուսանողներ՝ հաշվառում կատարել, և ահա մի

օր բացակա ուսանողներից մեկի փոխարեն մեկ ուրիշն է ներկա ասում. դա խիստ վայրացնում է Աճառյանին, և նա պատմում է, որ 40 տարի անց ինքը դոսան վանգը .տվողի՝ ես եմ պատասխանից ճանաչում է իր վաղեմի ընկերոջ ծայրը:

Հայտնի է, որ նշանավոր շատ մարդիկ, ականավոր գիտնականներ իրենց շատ տանջող խնդիրների ու հարցերի պատասխանները գտել ու լուծել են երազում (Գալուս, Նյուտոն, Պուանկարե), Պուշկինը հաճախ էր գրի առնում երազում երկնած քանաստեղծությունները: Աճառյանն էլ խոստովանում է, որ լեզվաբանական իր գյուտերը, լավագույն ստուգաբանությունները կատարել է մեծ մասամբ գիշերային պահերին՝ կես քուն, կես արթուն վիճակում, երբեմն նույնիսկ երազում: Նա ասվածի հավաստումն է համարում Սեդա անձնանվան ստուգաբանությունը, որ երկար ժամանակ չարչարել է իր ուղեղը: Եվ վերջապես, մի օր, քնած ժամանակ, իր ուղեղում փայլատակել է, որ Սեդա անունը ծագել է արաբերեն սեհդա հասարակ անունից, որ տիկին, մեծ կին է նշանակում: Աճառյանը այս երևույթին գիտական ճիշտ մեկնություն է տալիս և գիշերային ներշնչանքով մեկնում նաև Մաշտոցի՝ հայերեն տառերի երկնումը:

Արհեստավորի ընտանիքում ծնված, չարքաշ կյանքով ու ծանր աշխատանքով մեծացած, կյանքի շատ դառնություններ ճաշակած մեծ մարդն ու իսկական քաղաքացին իր ամբողջ կյանքում նաև բարոյություն ու հոգատարություն է ցուցաբերել կարիքավորներին ու անօգնականներին: Նա մուրացկան խաչիկին մի օր հրավիրում է իր տուն (Արովյան փողոցում) և ասում.

- Խաչի՛կ եղբայր, հայ ժողովուրդը աշխատասեր է, մուրացկանությունը նրա համար ամոթաբեր է, թո՛ղ այդ արհեստը. ես քեզ ամեն ամիս ապրուստի դրամ կտամ, պայմանով, որ ձեռք չմեկնես մարդկանց և մի հարմար գործ գտնես, աշխատես: Ես էլ ծանր օրեր եմ ապրել Փարիզում, բայց մուրացկանություն չեմ արել: Կգաս մեր տուն ամեն ամսի վերջին օրը, կստանաս գումարը, հենց որ չեկար, կիմանամ, որ արդեն աշխատում ես: Մարդը համաձայնում է և հաջորդ օրվանից փողոցներում չի երևում և վեց ամիս հետո չի գալիս սահմանված գումարն ստանալու. նշանակում է՝ աշխատանք էր ճարել:

Աճառյանը 300 ոտբլի է նվիրում հիվանդ կնոջն ու երեխային խնամող մի արհեստավորի, որը պրոֆեսորից այդ փողը խնդրել էր փոխարինաբար: Նա իր քաղաքացիական պարտքն է համարում մեծ գումար մուծել մի հանգանակության համար (բայց նույն դրամարկղից 5 կոպեկ մանրադրամ ստանալու համար բավական ժամանակ է կորցրել):

Աճառյանը արվեստի, հատկապես ժողովրդական երգերի մեծ սիրահար էր. այդ մասին է վկայում Կոմիտասի հետ նրա անչափ մտտիկ ու հոգեհարապատ լինելը և նրա երգերը պաշտելը: Նրա սիրելի երգչուհիներից էր Շողիկ Մկրտչյանը. նրա հետ անձամբ ծանոթանալու համար Աճառյանը գնում է ուղիովկոմիտե: Երբ նրան

տեսնում է խղճուկ հազուատով և տղամարդու մաշված կոշիկներով, պզուռ է, որ այդ թովիչ երգչուհին կարիքի մեջ է. այդ օրվանից նրան հոգեպալակ է համարում և պարբերաբար օգնում դրամով ու հազուատներ գնելով: Աճառյանի այդպիսի հոգեպալակների թվը մեծ էր: Նա տարիներ շարունակ օգնել է բավականին թվով ուսանողների, որոնք որևէ պատճառով թոշակ չեն ստացել կամ նյութական ծանր պայմանների մեջ են եղել, բայց օգնել է. երբ պզացել է, որ տվյալ ուսանողը խոստումնալից ուժ է, ապագայի համար լավ մարդ ու մասնագետ: Նա նյութական օժանդակություն է ցույց տվել մեր օրերի նշանավոր գիտնականներից մի քանիսին: Ավելի մեծ է եղել ուսուցչապետի բարոյական օգնությունը իր սաներին, որոնց հետ նա տանը իր այնքան թանկ ժամանակից տրամադրել է պարապելու համար:

Աճառյանի գիտական բարեխղճությունն ու պատասխանատվությունը նույնպես շատ ուսանելի են մեր օրերի ուսանողների ու գիտնականների համար: Գիտությունը նրա համար սրբապան տաճար էր: Գիտությամբ պբաղվող մարդը, ըստ նրա, պետք է լինի խիստ պնդիկ և վերին աստիճանի պարտաճանաչ: Ուրիշի մտքերի, եզրակացությունների յուրացումը համարում էր գողությունից ավելի ծանր հանցանք: Ահա թե ինչու Աճառյանը իր ստուգաբանությունների ու գիտական եզրակացությունների մեծ մասը, որքան հնարավոր է եղել, նամակագրությամբ կամ բանավոր հարցումներով ստուգել ու ճշտել է շատ հայագետների կարծիքների հաշվառմամբ և իր բոլոր աշխատություններում նշել այն մարդկանց անունները, ովքեր թեկուզ մեկ հարցով, մեկ բառով օգնել է իրեն:

Նա օժտված էր նաև հուժկու երբեք չթուլացող պզացումով: Սիրում էր անեկդոտներ ու պարճալի պատմություններ լսել ու պատմել՝ նույնիսկ իր մասին հորինվածները: Հաճախ սրամիտ դիտողություններ ու բնութագրումներ էր անում նաև իր ուսանողներին:

Կենսուրախությունն ու բոլոր իրավիճակներում իր մարդկային արժանիքները պահպանելու կարողությունը նույնպես Աճառյանին բնութագրող արժանիքներ են: Հենց դրանք էլ Աճառյանին բազում մղձավանջային օրեր պահեցին երևանյան բանտախցերում (1937-1939 թթ.): Նա չընկճվեց բիրտ ու դաժան քննիչների տանջանքներից, չկորցրեց հոգու արիությունը և հույսը ապագայի նկատմամբ: Նա գերադասել է այդ մասին լռել, չի գրել իր հուշերում, չի պատմել նույնիսկ կնոջն ու մտերիմներին՝ ասելով, որ ստորագրություն է տվել, որը հավասար է Ավետարանի վրա երդվելուն: Բանտից ապատվելուց հետո Աճառյանը այն ժառը, որի տակ տիկին Սոֆիկը թաքցրել էր ձեռագրերը, անվանեց սրբապան ժառ, որը երկու տարի պրկվելով ջրից՝ իրեն պոհաբերել է հանուն ձեռագրերի:

Երկրորդ հարվածը պայծառ հոգու տեր գիտնականին, համալսարանը և իր ուսանողներին անսահման սիրող դասախոսին հասնում է 1949-ին. նրան հեռացնում են համալսարանից՝ բուրժուական լեզվաբանությանը հարելու մեղադրանքով (նա չէր ընդունում Ն. Մատի «Լեզվի նոր ուսմունքը» և Գ. Ղափանցյանի «Լեզուների

խաչավորման» տեսությունը): Այդ ընթացքում, որ մեկ տարուց ավել է տևել, ծնունդով ու էությունը մանկավարժը (կնոջ պատմելով) ամեն առավոտ, դասերն սկսվելուց առաջ, երբ դեռ ոչ ոք համալսարան մտած չի եղել, Աճառյանը մտնեցել է համալսարանին, համբուրել մուտքի դուռը, սրտի խոր կսկիծով մի կերպ հաղթահարել լսարան շմտնելու ահավոր տվայտանքը, կոտրած սրտով վերադարձել տուն ու շարունակել դեռ չավարտած «Լիակատարը», որի վերջին նախադասությունը գրել է մահկանացուն կնքելու օրը, 1953 թ. ապրիլի 16-ին:

Աճառյանը նաև նվիրյալ հավատացյալ էր. կնոջ՝ Սոֆիկի, և դստեր՝ Քնարիկի պատմելով, նա ամեն օր, քնելուց առաջ, աղոթում էր. երևի թե չորս աղոթք գիտեր, որ ամեն աղոթքից հետո թաշկինակի մի ծայրը հանգույց էր անում:

Աճառյանի տաղանդավոր գիտնական լինելը, ստեղծագործական նման քեղամնավորությունը, տիտանական աշխատանք կատարելու կարողությունը, վիրտուոզության հասնող հիշողությունը, անչափ մարդկային ու բարի լինելը մի՞թե աստվածային շնորհներ չէին: Կամ նրա բնավորության վերոհիշյալ գծերը մի՞թե ավետարանական պահանջներ չեն:

Աճառյանի մահը նույնպես Աստվածատուր է եղել: Նա լիովին պատրաստ է եղել դրան: Առավոտյան սովորականի նման դասախոսության է գնացել համալսարան, թեև իր սափրվելու օրը չի եղել, սափրվել է, լողացել, փոխել ներքնահագուստը, ճաշել ախորժակով, նստել ճոճաթոռին և բարձր տրամադրությամբ ասել կնոջը.

- Սոֆի'կ, ես երջանիկ եմ, փա՛ռք Աստժո, կինս առողջ է, աղջիկս՝ առողջ, այսօր էլ կարողացա համալսարան գնալ, և դասերս հաջող անցան, հիմնական գործերս վերջացրել եմ, այսօր «Լիակատար քերականությանս» վերջակետը դրեցի, ապրել եմ 77 տարի. կախարդական երկու թվանշան կողք-կողքի, վայելել եմ ամեն ինչ, տեսել եմ այն օրերը, որ երապում էի: Հիմա ինձ համար ամեն ինչ վերջացել է...

Այդ օրը նա օպերայի երկու տոմս էր վերցրել «Ալմաստ» ներկայացման համար, կնոջն ու աղջկան համբուրում է, սեղմում կրծքին և հուզվում: Կինը հարցնում է.

- Հրայյա՛, այսօր ի՞նչ է պատահել քեզ, արտասովոր բաներ ես անում, հուզված ես:

- Ոչինչ, ուրախությունից է, գնացեք, այսօր իմ ամենաերջանիկ օրն է:

Վերադառնալուց հետո Աճառյանին տեսնում են հանգիստ «քնած»՝ ձախ ձեռքը գլխի տակ, աջ ձեռքին թաշկինակը՝ երեք ծայրերը հանգուցված, մեկը՝ ոչ...

